



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 25 Օգոստոս, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

**Փայլին արդարքն յարքայութեան, եւ ճգնաւորքն՝ ի Հանգստեան,
մարտիրոսքն պսակին, եւ կուսանաց լապտերք վառին.
դասեցո, Տէր, ընդ նոսին, որք գլբեզ Աստուած խոստովանին,
արդարութեամբ մի դատեցին, այլ գթութեամբ Քո քաւեցին:**

ԱՊՈԹՔ

Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, փառութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանոթեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ գաս քու թագաւորութեամբդ: Քեզի կը պաղատինք՝ քեզի խաչակից եղո-ղին հետ, յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 85

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Քարեհանութիւնդ ցոյց տուիր քու երկրիդ, Տէր,
եւ քու գերեալ ժողովուրդդ վերադարձուցիր:
Ժողովուրդիդ անօրէնութիւնը ներեցիր,
անոր բոլոր մեղքերը քաւեցիր:
Սրտմտութիւնդ դադրեցուցիր,
ահեղ զայրոյթդ սանձեցիր:
Վերադարձիր մեզի, ով մեր փրկիչ Աստուածը,
եւ քու սաստիկ բարկութիւնդ հեռացուր մեզմէ:
Մեզմէ յաւիտեան բարկացա՞ծ պիտի մնաս,
բարկութիւնդ տեւակա՞ն պիտի ըլլայ:
Մեզի նոր կեանք պիտի չտա՞ս,
որպէսզի քեզմով ժողովուրդդ ուրախանայ:
Մեզի հանդէպ ողորմութիւնդ ցոյց տուր, Տէր,
եւ փրկութիւնդ տուր մեզի:
Ես կը լսեմ ինչ որ Տէր Աստուած կ'ըսէ.
անկա խաղաղութիւն կը խոստանայ իր ժողովուրդին,
մեզի՝ որ իրեն հաւատարիմ ենք,
եւ անոնց՝ որոնք սրտով իրեն դարձած են:
Վստահաբար Աստուծոյ փրկութիւնը մօտ է իրմէ
ակնածողներուն,
որպէսզի իր փառքը մեր երկրին մէջ բնակի:
Սէրն ու հաւատարմութիւնը իրարու պիտի հանդիպին,
արդարութիւնն ու խաղաղութիւնը պիտի համբուրուին:
հաւատարմութիւնը երկրէն պիտի բուսնի,
արդարութիւնը երկինքէն պիտի պարգեւուի:
Այո, Տէրը իր բարիքը պիտի տայ,
եւ մեր երկիրը իր բերքը պիտի տայ:
Արդարութիւնը Տիրոջ առջեւէն պիտի երթայ,
եւ անոր համար նամբայ պիտի բանայ:

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Այսօրուան Սաղմոսին վերնագիրը այնքան դիպուկ է, որ այսօրուան մարդկության փնտրությունն է, խաղաղությունն է արդարություն: Փնտրությամբ մը, որ ինչպես անցեալին, նոյնպէս ալ այսօր պիտի չկա-րենայ մարդը գտնել եւ ունենալ, այնքան արեւն որ սիւսալ տեղի մէջ է իր փնտրությամբ: Այսօր ամբողջ աշխարհը կը խօսի խաղաղութեան մասին, բայց ցաւօք սրտի, որքան կը խօսուի խաղաղութեան եւ արդարութեան մասին, նոյնքան աւելի պատերազմներն ու անարդարութիւնը կը շարանայ: Պարճառ, որովհետեւ սիւսալ տեղի մէջ է որ կը փնտռենք: Այնպէս ինչպէս հրեշտակը պիտի ըսէր իւղաբեր կիներուն, «Որո՞ւ կը փնտռէք»: Անոնք պատասխանեցին. «Նագովրեցի Յիսուսին»: Հրեշտակը պատասխանեց. «Ինչո՞ւ կենդանին մեռելներուն մէջ կը փնտռէք: Հոս չէ, յարութիւն առաւ»: Այսօր ալ մենք խաղաղութիւնն ու արդարութիւնը ո՞ր կը փնտռենք:

Այսօրուան Սաղմոսը, Կորախի որդիներուն ժողովածուն քաղուած ունի երեք բաժին. 1-3-ին, որ կը ներկայացնեն անցեալի օրինութիւնը, թէ ինչպէս Աստուած բարեհաճ եղաւ իր ժողովուրդին նկար-մամբ, ժողովուրդը գերութենէն վերադարձուց, ակնարկութիւնն է Բաբելոնի գերութեան: Ժողովուրդին անօրէնութիւնը ներեց, մեղքերը քաւեց, սրտմտութիւնը դադրեցուց, զայրոյթը սանձեց: Հեղափոխութեամբ-կանօրէն այս փողերով Սաղմոսերգուն մեզի կը ներկայացնէ Աստուծոյ ինչպիսին ըլլալը: Պարտաւար ներելու իր ժողովուրդին մեղքն ու անօրէնութիւնը, եւ անգամ մը որ մեղքը ներուի, Աստուծոյ սրտմտութիւնն ու զայրոյթը կը դադրի: Որովհետեւ Աստուած կը բարկանայ մեղքէն: Աստուած կ'արեւ մեղքը, բայց պարտաւար է ներելու մեղաւորին: Եզեկիէլի մարգարէին պիտի ըսէ. «Ես մեղաւորին մահը չեմ ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը»: 4-7-ին, խնդրանք է, որ Աստուած երկ վերադառնայ, սաստիկ բարկութիւնը հեռացնէ, յաւիտեան բարկացած չմնայ, նոր կեանք մը տալու առիթ տայ, որպէսզի ժողովուրդը Աստուծոյ-մով ուրախանայ, եւ ողորմութիւնն ու փրկութիւնը ցոյց տայ: Հեղափոխականօրէն, արդեօք Աստուած Ինք է որ պէտք է վերադառնայ, կամ ժողովուրդը ինք դառնայ ու հեռանայ մեղքէն: Այնպէս կը թուի, որ Աստուած Ինք հեռացեր է: Ընդհակառակը, մեր մեղքն ու անօրէնութիւնն է որ մեզ հեռացուցած է Աստուծոյմէ, բարկացուցած է, ու կը բարկացնէ զԱստուծոյ: Իսկ վերջին, 8-13-ին կը ներկայացնեն, որ Աստուծոյ պարտաւար է խաղաղութիւն պարգեւելու եթէ դառնանք Իրեն, հաւատարիմ ըլլանք Իրեն, ու մա-նաւանդ՝ սրտով դառնանք Իրեն: Ասկէ առաջ անդրադարձանք այն երեւոյթին, թէ ինչ կը նշանակէ սրտով դառնալ Աստուծոյ, այսինքն՝ ամբողջութեամբ, եւ ոչ թէ միայն խօսքով կամ շրթներով արտայայտուած, այլ մեր մտքերն ու խորհուրդները դէպի Իրեն: Աստուած Իր խաղաղութիւնը պարտաւար է տալու, ոչ թէ բոլորին, այլ միայն անոնց որոնք Իրեն կը դառնան, Իրեն հաւատարիմ են: Այնպէս ինչպէս, երբ Քրիստոս խաչաւիային վրայ պիտի ըսէ. «Հայր ներէ», սակայն այդ ներումը որուն, անոր որ զոյւնով եւ ապաշ-խարութեամբ Իրեն կը վերադառնայ: Յաճախ այնպէս կը ներկայացուի, թէ Աստուած ողորմած է, այդ ճիշդ է, սակայն այդ ողորմութիւնը անոնց որոնք կը խնդրեն: Աւելի յարակօրէն կ'ըսէ. «Աստուծոյ փրկու-թիւնը Իրմէ ակնածողներուն», այսինքն՝ Աստուծոյ երկիւղով ապրողներուն: Աստուծոյ երկիւղը, այսինքն՝ Աստուծոյ վախը, Դաւիթ 34 Սաղմոսին մէջ պիտի ըսէ. «Ձեզի ստրկեցնեմ թէ ինչ է Տիրոջ վախը: Կուգե՛ն երկար կեանք ունենալ, կուգե՛ն բարօր օրեր տեսնել. լեզուդ չարախօսութեան մի ծառայեցնէր, շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին: Հեռու մնա չարիքէն եւ բարիք ըրէ, խաղաղութիւն կամեցիր եւ զայն հե-տապնդէ»:

Հեղափոխական փողեր են 10-ին, ուր կը ներկայացուի Աստուծոյ խոստումին կատարումը, Մէրն ու հաւատարմութեան հանդիպումը, արդարութեան ու խաղաղութեան ողջագրումը: Հաւատար-մութիւնը երկրէն պիտի բուսնի, իսկ արդարութիւնը երկինքէն պիտի պարգեւուի: Ի միջի այլոց, այս փողերը Մեսիական փողեր են, երբ 7-ին մէջ խնդրեց, որ Աստուած Իր ողորմութիւնն ու փրկութիւնը ցոյց տայ, ահա այդ բոլորը իրականացան Մեսիային գալուստով:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նախապահ,
ի ննջել եւ յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*